ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Ժամանում Լոնդոն

Փետրվարի 6-ին, շաբաթ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Լոնդոն է հասնում տեղական ժամանակով ժամը 5-ին, ընկերակցությամբ Իր մնայուն շքախմբի անդամների և Հայկ Գալուստյանի, և օդանավակայանում դիմավորվում է Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Պսակ արքեպիսկոպոսի, Տ. Ներսես, Տ. Արսեն, Տ. Տաթև վարդապետների, Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության և համայնքային ժողովի անդամների, այդ թվում՝ Նուպար Կյուլպենկյանի, Է. Պեննեյանի, Հ. Մուրֆյանի, Ա. Խաչատուրյանի, Պետրոս Ալեքսյանի և լոնդոնահայ կազմակերպությունների ու խուռներամ բազմության կողմից։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունում է նաև Քենտրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչը։

Հանուն Լոնդոնի հայ գաղութի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ողջունում է Հ. Մուրֆյանը:

Նորին Ս. Օծությունը, օրհնելով բոլոր ներկաներին, Իր Հայրապետական ուրախությունն է հայտնում ջերմ դիմավորության և սրտագին ընդունելության համար։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցին, ուր հավաքված խուռներամ բազմությունը ջերմորեն ողջունում է Իր Հայրապետի օրհնաբեր ժամանումը։

Եկեղեցու զանգերի զողանջի ներքո, Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի, ուր սպասում էին զանազան կրոնական համայնքների պատկանող բարձրաստիճան հոգևորականներ։

Եկեղեցական արարողության ավարտին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը Լոնդոն ողջունում են Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Պսակ արքեպիսկոպոսը և. Քենտրբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբություն դոկտ. Մայքլ Ռեմզիի ներկայացուցիչ Լոնդոնի եպիսկոպոս Դեյվիդ սրբազանը, որը մասնավորաբար շեշտում է, որ Անգլիկան եկեղեցին և համայն հավատացյալ անգլիկան ժողովուրդը որոշել են սուրբ պատարագի մատուցմամբ, աղոթքով և քարոզով, ապրիլի 24-ին ոգեկոչել հայկական եղեռնի 50-ամյակը, որին զոհ են գնացել շուրջ երկու միլիոն անմեղ հայ նահատակներ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունն է հայտնում քույր եկեղեցիների ներկայացուցիչների ներկայու-

Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, առաջնորդվում է Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցին:

թյան համար Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցում և Իր մասնավոր շնորհակալությունը՝ Քենտրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցչին, նրա եղբայրական, ջերմ խոսքերի համար, ապրիլյան եղեռնի 50-ամյակի առիթով մեր նահատակների հիշատակին արտասանված, և օրհնում է բոլոր ներկա հավատացյալներին, մաղթելով աշխարհին խաղաղություն, անգլիկան ժողովրդին, եկեղեցուն և երկրին՝ բարգավաճում և բարօրություն։

Նորին Ս. Օծությունը հյուրընկալվում է Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու առաջնորդարանում, վայելելով որդիական ջերմ և սիրալիր հոգատարությունը Տ. Պսակ արքեպիսկոպոսի, իսկ շքախմբի անդամները առաջնորդվում են «Պրինս ավ Վելս» հյուրանոցը։

Հայրապետական սուրբ պատարագ և քարոզ Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցում

Փետրվարի 7-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 10-ին, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցում, մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ և Իր պատգամով ու օրհնությամբ մխիթարում Իր հոգևոր զավակներին։

Ամպհովանու տակ և հայրապետական լրիվ զգեստավորման մեջ, Նորին Ս. Օծությունը առաջնորդվում է եկեղեցի, բարեպաշտ ժողովրդի սրտագին ուրախության և բարեմաղթությունների ներքո։

Եկեղեցին լիքն է հավատացյալներով։ Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել մասնավոր հրավիրյալներ, այդ թվում՝ Քենտրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Տ. Դեյվիդ եպիսկոպոսը, կանոնիկոս Հ. Դեյվիդ Տեստոնը, Անգլիայում պապական նվիրակ Կարդինալ արքեպիսկոպոսը՝ ընկերակցությամբ Անգլիայի Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Տ. Քաշման եպիսկոպոսի, Անգլիայում Հույն Օրթոդոքս եկեղեցու պետ Տ. Աթենագորաս արքեպիսկոպոսը, Անգլիայում Ռուսական եկեղեցու պետ Տ. Անտոնի արքեպիսկոպոսը, մի շարք բողոքական համայնքների ներկայացուցիչներ, ինչպես նաև Ջիբրալտարի նախկին եպիսկոպոս ծերունազարդ Տ. Պեքստոնը և ուրիշներ։

Հայրապետական սուրբ պատարագին ներկա են նաև Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության խորհրդի անդամները, Լոնդոնի հայ համայնական կազմակերպությունների ներկայացուցիչները և հոծ բազմություն։

Ս. Սեղանին սպասարկում են Տ. Պսակ և Տ. Կոմիտաս սրբազանները, Տ. Առսեն և Տ. Տաթև վարդապետները։

Քենտրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչը և Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Պսակ արքեպիսկոպոսը առաջնորդվում են եկեղեցի

Եկեղեցու երկսեռ դպրաց դասը ներդաշնակորեն կատարում է սուրբ պատարագի քառաձայն երգեցողությունը։

Բոլոր ներկաները, հայ թե օտար, երկյուղածությամբ և հիացումով են հետևում հայրապետական սուրբ պատարագին։

«Հայր մերի»-ից առաջ քարոզում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ» բնաբանով։ Նորին Ս. Օծությունը Իր քարոզում խոսում է Հայ Եկեղեցու առաքելական ծագման և Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով և ջանքերով Հայ Եկեղեցու կազմակերպման և այն կենդանի ու վառ հավատի մասին, որը Ա դարից սկսած պայծառ է մնացել հայ քրիստոնյա ժողովրդի հոգում, հակառակ նրա կրած անլուր տառապանքների և նահատակության, և հույս է հայտնում, որ քրիստոնեական եկեղեցիների իրարհասկացողությունն ու համագործակցությունն է՛լ ավելի ամրապնդում են մեր քրիստոնեական հավատը աշխարհում, մանավանդ մեր օրերին, ներկա պայմանների մեջ։

Իր քարոզի վերջում, Հայոց Հայրապետը բարեմաղթություններ է անում Անգլիայի Թագուհու արևշատության և անգլիացի ժողովրդի բարօրության համար։ Ներկա քույր

եկեղեցիների ներկայացուցիչներին ուղղած շնորհակալության խոսքով ավարտվում է Նորին Սրբության քարոզը։

Այնուհետև, եկեղեցական թափորով, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է եկեղեցու հյուրասենյակը, ուր ժողովուրդը աջահամբույրով իր սերն ու երախտագիտությունն է հայտնում Հայոց Հայրապետին։

Ժամը 1-ին, առաջնորդարանում, ի պատիվ Հայոց Վեհափառ Հայրապետի և քույր եկեղեցիների ներկայացուցիչների, տրվում է ճաշկերույթ, որն անցնում է քրիստոնեական, եղբայրական ջերմ մթնոլորտում։

Կիրակի, երեկոյան ժամը 8—10, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում բարեհաճում է ընդունել մի շարք պաշտոնական և անհատական այցելություններ։

Փետրվարի 8-ին, երկուշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է բազմաթիվ այցելություններ։

Ժամը 1-ին «Կրոսվենոր հաուզ» հյուրանոցի դահլիճում, Լոնդոնի հայոց համայնական խորհուրդը և հայ կանանց հանձնաժողովը, ի պատիվ Հայոց Հայրապետին, կազմակերպում են ընդունելություն, որին ներկա են խորհրդի բոլոր անդամները՝ Է. Պեննեյան (նախագահ), Ա. Մութաֆյան (փոխ-նախագահ), Հրանտ Աբաճյան (ատենադպիր), Հայկ Գալուստյան, Ա. Խաչատուրյան, տիկին Սրբուհի Մատաթ, տիկին Ֆլորա Աբաճյան, տիկին Տիգրանուհի Հիլի, տիկին Վերժին Կյուլպենկյան, տիկին Սիրարփի Սուլթանյան, տիկին Հերմինե Բոյաճյան (տիկնանց հանձնաժողովից)։

Հավաքույթ «Կենսինգտոն տաուն հոլ»-ում

Փետրվարի 8-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Լոնդոնի հայոց համայնական խորհուրդը, օգտվելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Լոնդոն գտնվելու բարեպատեհ առիթից, «Կենսինգտոն տաուն հոլ»-ի մեջ կազմակերպում է հավաքույթ։

Սույն պատմական հանդիպմանը ներկա էր շուրջ 500 հոգի։

Ժամը 8-ին ժամանում է Վեհափառ Հայրապետը և ընդունվում է ջերմ, խանդավառ ծափերով։

Նորին Ս. Օծությունը, նախագահության սեղանի շուրջ տեղ գրավելուց հետո, Տ. Պսակ արքեպիսկոպոսը հանդիսությունը բացում է գեղեցիկ և խանդավառ ողջույնի խոսքով։ Այնուհետև Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությունը սրտագին ուղերձներով ողջունում են համայնական խորհրդի նախագահ Է. Պեննեյանը, Հայ տան ատենապետ Ա. Խաչատուրյանը, Հայկական բարեգործական ընդհանուր միության փոխ-ատենադպիր Գ. Թանքան, երիտասարդ մտավորական Ա. Կյուզելյանը հանուն «Արեգակ» ամսագրի և Գրիշա Դավթյանը։ Հայաստան Վարդանյանը, որպես Լոնդոնահայ երիտասարդական միության նախագահ, կարդում է հետևյալ գեղեցիկ ճառը.

«Վեհափա՛ռ Տեր.

Լոնդոնի հայ երիտասարդաց միության կողմե, որդիական խոնարհությամբ, կողջունեմ Ձերդ Վեհափառության գալուստը, և կմաղթեմ արևշատություն և հաջողություն Ձերդ Վեհափառության։

Մեծն Բրիտանիո այս հյուրընկալ, բայց և այնպես օտար ափերուն վրա աճող ու զարգացող հայ երիտասարդությունը հավաքված է մեկ հովանիի տակ, մեկ տան ներքև. կգործե մեկ սրտով, մեկ նպատակի համար՝ հայապահպանման համար։

Որևէ ազգի մը ապագան նախատեսելու համար, ընկերաբանները կուսումնասիրեն տվյալ ազգի ժամանակի երիտասարդությունը. կնային անոր ֆիզիկականին, մտավոր կարողություններուն և հոգեկանին, ապա կեզրակացնեն, թե այդ ազգը պիտի հարատևե՞, թե ոչ, և ինչպիսի՞ ապագա մը պիտի ունենա։ Այդ բացատրությամբ, ազգի մը կյանքի տվյալ մեկ պահին, նույն ժամանակվան երիտասարդության պատասխանատվությունն է այդ ազգի ապագա գոյության խնդիրը։ Լավատեղյակ այդ իրողության և գիտակից իր անցյալին, իր ներկայի կոչումին և ապագային, Հայ երիտասարդաց միությունը իր ուսերու վրա է առած լոնդոնահայ երիտասարդությունը հայկականությամբ ներշնչելու և ոգևորելու սրբազան պարտականությունը. և այժմ, Ձերդ Սրբության ներկայության, կխոստանա փայլուն ապագա լոնդոնահայ գաղութին։

Պարտիմ հիշել, որ այս նվիրական գործին մեջ մենք վայելած ենք գաղութիս համակրանքը. վայելած ենք տեղվույս բոլոր կազմակերպություններու և միություններու քաջալերանքը, և ի մասնավորի, Վեհափա՛ռ Հայր, Ձերդ Սրբության նախանձախնդիր պատվիրակի՝ գերաշնորհ Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանի հովանավորությունը։ Վստահ ենք, որ այդ կշարունակվի նաև ապագային, նույն նախանձախնդրությամբ և իրապաշտությամբ։ Վստահ ենք նաև, Վեհափա՛ռ Տեր, որ Ձերդ Սրբության հովանիին տակ, ներշնչված Ձերդ Վեհափառության հայրական ցուցմունքներով, մենք պիտի կրնանք շարունակել մեր հայրերու գործը և իրականացնել անոնց ազգային մեծ երազը։

Մենք՝ Սփյուռքի հայերս, բայց հայրենաներ հայեր, դժբախտաբար կմնանք քիչ մը անհաղորդ մեր Մայր Հայրենիքի երիտասարդ եղբայրներու և քույրերու մտածումներուն, անոնց հույսերուն և հույզերուն. մենք կտապինք ուղղակի փոխհարաբերության մը պակասեն։ Արդյոք անո՞նք ալ կմնան մեզմե անհաղորդ...

Ինչպե՞ս կըլլար, Վեհափառ Հայր, եթե նախաձեռնողը ըլլայիք շարժումի մը, որ ամրացներ կապը մեր և հայրենիքի երիտասարդության, որպեսզի մեր հոգիներու ծարավը հագեցվեր, որպեսզի մենք, ճերմակ ջարդի ենթակա երիտասարդությունս, չդառնայինք տարբեր հայեր անոնց համար, և անոնք ալ տարբեր հայեր մեզի համար, այլ ըլլայինք մեկ, միացյալ և ամբողջական հայեր, ամբողջական հայրենիքով։

Մենք շատ պիտի բաղձայինք լսել Ձերդ Վեհափառությենեն մեր երիտասարդ եղբայրներու և քույրերու մասին։ Վստահ ենք, որ Ձերդ Սրբության հետ բերած կըլլաք ողջույնը մեր եղբայրներու, համբույրը մեր քույրերու։ Կխնդրեմ, արդարև, որ Ձերդ Վեհափառության վերադարձին տանիք անոնց ողջույնները մեր, և ըսեք, որ մենք ալ որդիներն ենք նույն Հայաստանի, որ մենք ունինք հույս անհատնում, ունինք սեր անաղարտ ու հավատք պողպատյա, և ըսեք, որ մենք կհանդիպինք՝ Ձերդ Վեհափառության հովանիին տակ։

Երիտասարդի մեր անաղարտ սրտերով կցանկանք, Վեհափա՛ռ Հայր, անսպառ հաջողություն, որպեսզի մնաք խորհրդանիշը համերաշխության և հայկականության, և ըլլաք նոր օրերու Հայոց Հայրիկ»։

Ընդունելության ժամանակ խոսք է առնում նաև «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, որը խոսում է հայրենաշունչ մի կուռ ճառ։ Հայ երիտասարդաց միության երկսեռ երգչախումբը, շնորհալի ղեկավարությամբ Մարյանի, կատարում է «Երկու աշուն» (Ա. Մեսումենց) և «Սիփանի քաջեր» (Կոմիտաս) խմբերգերը փայլուն հաջողությամբ, Ռ. Արմենյանի դաշնակի ընկերակցությամբ։

Ընդհանուր խանդավառության և ստեղծված հայրենաշունչ մթնոլորտի մեջ, խոսք է առնում Հայոց Հայրապետը, հաղորդելով լոնդոնահայ ողջ համայնքին «կենարար և փրկարար ողջույնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի», վկայելով միաժամանակ, որ «հայ ժողովուրդը ամեն տեղ իր սիրտը կբանա Ս. Էջմիածնեն եկած օրհնության և Ամենայն Հայոց Հայրապետի առջև», որը մեկ մտածում միայն ունի՝ Հայ Եկեղեցու միությունը, զորացումը Ս. Էջմիածնի օրհնության ներքո և հայ ժողովրդի միասնությունը՝ իր վերածնված Մայր Հայրենիքի շուրջ։

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և հայրապետական մաղթերգով՝ «Ամեն հայի սրտից բխած», երգված երգչախմբի կողմից։

Փետրվարի 9-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է հայ և օտար պաշտոնական անձնավորությունների և մարմինների ներկայացուցիչների այցելությունը։

Կամը 3-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է իր ներկայությամբ պատվել Խ. Մրբրբպյանի ընտանեկան հարկը, ուր Իր բարձր պատվին կազմակերպվել էր թեյասեղան, ջերմ ու սրտագին մթնոլորտում։

Նրեկոյան ժամը 8-ին, «Ռից» հյուրանոցում, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու խնամակալությունը, Նուպար Կյուլպենկյանի նախագահությամբ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպում է ընդունելություն, որին ներկա են լինում Տ. Պսակ և Տ. Կոմիտաս սրբազաններ, Տ. Տարև վարդապետ Սարգսյանը, Տ. Արսեն վարդապետ Ավետիքյանը, Տ. Ներսես վարդապետ Պոզապալյանը, Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, Գևորգ Քյուրքճյանը (խնամակալության քարտուղար), Ռ. Միքայելյանը (գանձապահ), Ա. Խաչատուրյանը, Լ. Աբաջյանը, Ն. Էքսերճյանը, Գ. Կյուլպենկյանը, Վ. Կյումուշճյանը (անդամներ)։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Քենտրբերիի Արքեպիսկոպոսին

Փետրվարի 10-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է մի շարք այցելություններ։

Ժամը 12-ին, Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն Լամբեթի պալատում։

Որոշյալ ժամին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Տ. Պսակ, Տ. Կոմիտաս սրբազանների, Տ. Ներսես, Տ. Տարև, Տ. Արսեն, Տ. Արսեն վարդապետների և Ա. Հատիտյանի, ժամանում է Լամբեթի պալատը, ուր ողջագուրումով դիմավորվում է Քենտրբերիի Արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմզիի և անգլիական բարձրաստիճան հոգևորականների կողմից և առաջնորդվում է հանդիսությանց սրահը։

Հայ և Անգլիկան եկեղեցիների պետերի և հոգևորականության միջև տեղի է ունենում ջերմ զրույց սրտագին մթնոլորտում։ Այնուհետև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր շքախմբով առաջնորդվում է ընդունելության սրահը։

Սեղանը օրհնում է Նորին Ս. Օծությունը։

Հրավիրյալների թվում են Լոնդոնի եպիսկոպոսը, Քենզինգտոնի եպիսկոպոսը, դոկտ. Ս. Դավսեթը, Հ. Սատտերտվեյտը, Հ. Հեների Կուրերը, Հ. Դեյվիդ Տեստոնը և ուրիշներ։

Ընդունելության ժամանակ սեղանի շուրջ ստեղծվում է եղբայրական մթնոլորտ։

Քենտրբերիի Արքեպիսկոպոսը ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի այցելությունը Լամբեթի պալատ, այն գնահատելով որպես հայ և անգլիկան եկեղեցիների բարեկամական հարաբերությունների է՛լ ավելի ամրապնդում և հայտարարում է, որ ինքը սիրով ընդունել է Նորին Ս. Օծության Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելելու եղբայրական հրավերը և հույս ունի, որ այդ այցելությունը տեղի կունենա 1966 թվականի Զատկի տոներից անմիջապես հետո։

Քենտրբերիի Արքեպիսկոպոսը դրվատալից խոսքերով է արտահայտվում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Պսակ արքեպիսկոպոսի մասին, որը ոսկե օղակ է հանդիսանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Քենտրբերիի Արքեպիսկոպոսի միջև և ի նշան սիրո և ուշադրության, Տ. Պսակ արքեպիսկոպոսի կուրծքը զարդարում է Լամբեթի պատմական խաչով։

Իր պատասխան խոսքում Հայոց Հայրապետը ուրախություն է հայտնում, որ Ինքը երրորդ անգամ է գտնվում Լոնդոնում և իր սրտում դեռ վառ են առաջին և երկրորդ այցելությունների տպավորությունները։ Այնուհետև Նորին Ս. Օծությունը Իր շնորհակալությունն է հայտնում Քենտրբերիի Արքեպիսկոպոսին՝ եղբայրական ջերմ ընդունելության և հյուրասիրության համար։

Տ. Պսակ արքեպիսկոպոսը շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում Քենտրբերիի Արքեպիսկոպոսին Լամբեթի խաչով իր պարգևատրման համար, այն գնահատելով որպես Անգլիկան Եկեղեցու սիրո արտահայտություն դեպի Հայոց Եկեղեցին։

Ընդունելությունից հետո, եկեղեցական երկու պետերը իրենց շքախմբերով առաջնորդվում են Լամբեթի պալատի մատուռը՝ մի պահ ամփոփվելու և աղոթելու։ Այնուհետև Հայոց Հայրապետը հրավիրվում է խորան Իր օրհնությունը տալու, և որից հետո հրաժեշտ է առնում Քենտրբերիի Արքեպիսկոպոսից, ներկա հոգևորականներից և բոլոր հյուրերից և վերադառնում հայոց առաջնորդարան։

Հրաժեշտի ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի

Դեկտեմբերի 10-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 8-ին, Լոնդոնի հայոց համայնական խորհուրդը Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպում է ժողովրդական ընդունելություն «Քենզինգտոն պալաս» հյուրանոցում, ավելի քան 400 հրավիրյալների մասնակցությամբ։

Նոյեմբեր ժամին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մուտք է գործում դահլիճ, ներկաների սրտագին ծափահարությունների տարափի տակ։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Ստեղծված ջերմ հայկական մթնոլորտում, Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ներկայությունը ողջունում են Ն. Կյուլպենկյանը, Է. Պեճնեյանը, Հ. Դալստյանը, Ա. Խաչատուրյանը, Հ. Թաճառն։ Խանդավառ և հայրենաշունչ ճառեր են ասում «Արեգակ» ամսագրի խմբագիր Ա. Խյուզելյանը և Լոնդոնահայ երիտասարդական միության նախագահ Հ. Վարդանյանը։ Դրիշա Դավթյանը արտասանում է իր «Սփյուռք» բանաստեղծությունը։ Ելույթներ են ունենում նաև Տ. Պսակ արքեպիսկոպոսը, Ա. Հատիտյանը։ Օրիորդ Լուիզ Վարդուկյանը՝ գրադարանապետ Լոնդոնի Հայ տան և մշակութային գործունեությանց հանձնախմբի անդամ, կարդում է հետևյալ բովանդակալից ճառը.

«Վեհափա՛ռ Տեր.

Ինձմե առաջ արտահայտվողները շատ անուշ խոսքեր խոսեցան այս իրիկուն, նույնպես երկուշաբթի գիշեր, երբ Դուք ընդունեցիք Լոնդոնի Ձեր հոտը Քենզինգտոն հոլի մեջ։ Մեր բոլոր կազմակերպություններուն ու պաշտոնական մարմիններուն ներկայացուցիչները արտահայտվեցան բարձր տրամադրություններով ու խոսեցան Ձեզի մեր բարի ու ազգօգուտ գործունեություններուն մասին։

Այս բնական երևույթ մըն էր հավանաբար։ Ձեր ներկայությունը այնպես համակեց մեզ ուրախության հուզումներով, որ մեզի մոռցնել տվավ մեր կյանքին իրական պատկերը... Ձեր հոգեկան ջերմությունը ողողեց մեր հոգիները ու մենք, քիչ մը գինովցած, տարվեցանք մոռնալ, որ իբրև հայ համայնք մենք նման էինք արևեն փրթած ու միջոցին մեջ կորսված փոքր մոլորակի մը, որ քիչ-քիչ կպաղի ու կկորսնցնե իր էական բնույթը։



ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ՄԱՅՔԼ ՌԵՄԶԻՆ

Ու մեր արտահայտություններուն մեջ մենք մոռցանք այն կյանքը, որ մեզի է իսկապես, երբ Դուք մեզ հետ չեք, ու պահ մը կարծեցինք ըլլալ այն, ինչ որ չենք արդարև։

Երկուշաբթի գիշերվան հիշատակելի հավաքույթեն վերջ, երբ մեկնեցա սրահեն, ուրախ էի ամենուն նման, սակայն քիչ մըն ալ տխուր, քիչ մը մտահոգ... Ձեր իմաստուն խոսքերն էին, որ այդ գիշեր ինձի մտածել կուտային ու հիմա ալ կթելադրեն ինչ որ կտարվիմ ըսել այս վայրկյանիս։

Վեհափա՛ռ Հայր, Դուք ըսիք, որ հայ ժողովուրդը իրավունք ունի այս արևուն տակ իր լուսավոր տեղը ունենալու, որովհետև ստեղծած է բարձրարժեք մշակույթ մը։ Ուրեմն կենթադրվի, որ մենք՝ հայերս, օտարներուն պիտի ծանոթացնենք մեր մշակույթը, որպեսզի անոնցմե կարենանք պահանջել հարգանք՝ մեր ազգին ու մեր իդեալներուն հանդեպ։ Սակայն, Վեհափա՛ռ Տեր, մենք ինչպե՞ս օտարներուն պիտի ծանոթացնենք մեր մշակույթը, երբ մենք չենք ճանչնար զայն, երբ որևէ ճիգ չենք ըներ զայն ճանչնալու և ոչ ալ փափագ ունինք զայն ճանչնալու...։ Մենք՝ երեցներս, «գործի մարդ ենք» և մշակութային ձեռնարկներ քաջալերելու ժամանակ չունինք. երիտասարդներս՝ արդեն այլապես զբաղած ենք և ունինք մեր զանազան հետաքրքրությունները, իսկ պատանիներս՝ արդեն պետք եղած չափով հայերեն չենք գիտեր, որ հայ մշակույթեն համառնենք...

Այնուհանդերձ, մեզի՝ լոնդոնահայերուս համար, «ճերմակ ջարդը» տեսական տարազ մը չէ այսօր, այլ շոշափելի իրողություն մը, ամեն օր քիչ մը ավելի խորացող վերք մը, որուն ցավը կզգանք մեր մորթին վրա։ Քանի մը տարի առաջ, երբ Միջին Արևելքեն մեծ թիվով հայեր եկան Լոնդոնի մեջ հաստատվելու, մեր փոքրիկները անգլիերեն չէին գիտեր, իսկ այսօր, անոնք միայն անգլիերեն գիտեն, և եթե սրբազան հոր վարած կիրակնօրյա դպրոցը չըլլա, հայերեն այբուբենն անգամ պիտի չճանչնան... Հայ մտքին ու հայ հոգիին դեմ մղված այս «ջարդը» կպահանջե հարատև ու գիտակից պայքար՝ մեր հոգեկան զենքերով, հայ լեզվով, հայ մշակույթով, հայկական առողջ ավանդություններու և մեր բարձրարժեք ժառանգությանց նախանձախնդիր պահպանումով։ Իսկ այս՝ կպահանջե զոհողություն, գործնական ու շինարար զոհողություն մեր առօրյա կյանքին մեջ։ Անուրանալի է, որ հայ մշակույթը մեր ամենեն դիմացկուն հոգեկան զենքերեն մեկն է։

Ես խոսք առի որպես անդամ Լոնդոնի Հայ տան մշակութային գործունեությանց հանձնախումբին և արդար ըլլալու համար պետք է ավելցնեմ հետևյալը. ամեն անգամ, որ երիտասարդներու կամ երիտասարդուհիներու մասնակցությունը խնդրենք մեր ձեռնարկներուն համար՝ գրական երեկո, վիճաբանական երեկո, երաժշտական երեկո և այլն, անոնք սիրահոժար կընդառաջեն մեր փափագին ու կբոլորվին մեր շուրջը։ Սակայն Լոնդոնի մեջ հայ կյանքին գոյատևումը ավելին կպահանջե մեր բոլորեն։ Ան պետք ունի ինքնաբխ զոհողություններու, որոնց հանձնառու չենք կրնար ըլլալ, եթե անտարբեր մնանք մեր մշակութային արժեքներուն հանդեպ։

Վեհափա՛ռ Հայր, պարզապես քննադատելու համար չէ, որ կարտահայտվիմ այսպես։ Դուք մեր Հայրապետն եք և տեղին էր, որ մեր բազմաթիվ ներկայացուցիչները խոսեին մեր կատարած բարի գործերեն. սակայն իրավունք ունիք նաև լսելու այն բարի գործերը, զորս չկատարեցինք և կրնայինք կատարած ըլլալ... ի վերջո, որպես մեր հովվապետը, Դուք մեր գերագույն խոստովանահայրն այ եք։ Ու ես կբաղձայի օգտվիլ Ձեր ներկայությենեն, որ ազգօգուտ ծառայություններու մեր ուխտերը կատարվեին մաքուր հիման վրա, առողջ ու իրատես ազգային գիտակցության հիման վրա։

Այսպիսով, Վեհափա՛ռ Հայր, Ձեր այցելությունը այս հոտին կդառնա ոչ միայն ճշմարիտ երջանկություն մը, երբ մեզ հետ եք, այլ նաև անհուն բարիք մը Ձեր մեկնելեն ետքն ալ, եթե միայն կարենանք կենդանի պահել այն ոգին, զոր Դուք ներշնչեցիք մեզի, և որուն ազդեցության տակ այնքան բարի խոստումներ եղան Ձեզի։

Վեհափա՛ռ Հայր, մեծապես երախտապարտ ենք, որ այցելեցիք մեզ, որովհետև այս հոտը, այս հանգրվանին վրա, շատ պետք ուներ իր Հովվապետին. դժվար է այժմեն չափել ամբողջ տարողությունը Ձեր այցելության բարիքին՝ մեր ապագա կյանքին համար։ Ու թեև գիտենք, որ Դուք ունիք բազմազան հովվական պարտականություններ էջմիածնի մեջ, մենք հոգևին պիտի մաղթենք, որ Դուք կարենաք կրկին այցելել այս հոտին, որ այնքան պետք ունի Ձեզի։ Այս հույսն է, որ վառ պիտի պահե մեր հոգիներեն ներս այս երջանիկ պահերուն կենարար հիշատակը։ Վեհափա՛ռ Հայր, մենք պիտի սպասենք Ձեր բարի վերադարձին»։

Հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերում տիկին Վ. Կյուզելյանը՝ երգով, Լյուսի Կոստանյանը՝ արտասանությամբ։

Նվերներ Մայր Աթոռին Վեհափառ Հայրապետի ուղևորության առիթով

Ընդունելության վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը *և Իր ոգևորիչ պատգամն ու օրհնությունը տվեց բոլոր ներկաներին։*

Իր խոսքի ընթացքում Վեհափառ Հայրապետը *լանջախաչով զարդարում է կուրծքը* Քենտրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Հ. Դեյվիդ Տեստոնի, *իսկ* Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով՝ *կուրծքը* Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նկարազարդումների բարերար, հանրածանոթ հնդկահայ պր. Պետրոս Ալեքսյանի, *բոլոր ներկաների ջերմ և սրտագին ծափահարությունների մեջ։*

Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանակիր Պետրոս Ալեքսյանը, *արցունքոտ աչքերով և խորունկ հուզումով, որդիական երախտագիտություն է հայտնում* Վեհափառ Հայրապետին *այդ բարձր ուշադրության և հայրական գնահատության համար, հայտարարելով, որ* Վեհափառ Հայրապետը *բարձր է պահում միշտ Իր գործունեությամբ և պատմական այցելություններով* Ս. Էջմիածնի *դարավոր հեղինակությունը, որը կարևոր ազդակ է միաժամանակ* Սփյուռքի *հայության միասնականության և* Մայր Հայրենիքի *հետ կապի ամրապնդման տեսակետից։*

Ընդունելությունը վերջանում է գիշերվա ժամը 12-ին Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Փետրվարի 11-ին, *հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին,* Վեհափառ Հայրապետը *Իր շքախմբով այցելում է Լոնդոնում սովետական դեսպան* Սոլդատովին: *Ամենայն Հայոց* Վեհափառ Հայրապետի *և հարգելի դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, մտերիմ մթնոլորտում։*

Այնուհետև նորին Ս. Օծությունը *առաջնորդարանում ընդունում է բազմաթիվ այցելություններ. և հանդիպումներ է ունենում* Ս. Սարգիս *եկեղեցու խնամակալության և լոնդոնահայ համայնքային խորհրդի հարգարժան անդամների հետ։*

Փետրվարի 12-ին, *ուրբաթ,* Վեհափառ Հայրապետը *մասնավոր տեսակցություն է ունենում առաջնորդարանում, առավոտյան ժամերին,* Աբգարյան *հիմնադրամի խնամակալության և* Էջմիածնի *հանձնաժողովի պատվարժան անդամների հետ։*

Երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը, Տ. Պսակ *արքեպիսկոպոսի և Իր շքախմբի անդամների ընկերակցությամբ, ներկա է լինում արքայական «Ալբերտ հոլ» սրահում սիմֆոնիկ համերգին, որպես հյուրը* տեր և տիկին Ա. Մուրաֆյանների:

Երեկոյան ժամը 10-ին, Նորին Ս. Օծութիւնը Իր ներկայութեամբ պատվում է Մուրաֆյանների ընտանեկան հարկը, օրհնելով նրանց սեղանի աղն ու հացը։

Փետրվարի 13-ին, շաբաթ, հետմիջօրեի ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Տ. Պսակ արքեպիսկոպոսի և Իր շքախմբի անդամների և այլ հրավիրյալների, Իր ներկայությամբ պատվում է լոնդոնահայ ծանոթ ազգայիններից Հայկ Գալստյանի ընտանեկան հարկը, ուր Իր բարձր պատվին կազմակերպվել էր ընդունելություն, ջերմ մթնոլորտում։

Ժամը 5-ին, լոնդոնահայ երիտասարդաց միությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպել էր Թեյասեղան, «Պրինս ավ Վելս» հյուրանոցում։

Սույն երիտասարդական կազմակերպությունը հիմնվել է 1952 թվականին և այժմ ունի շուրջ 200 երիտասարդ անդամներ, որոնց մեծ մասը բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ են։ Երիտասարդաց միությունը կազմակերպում է մշակութային երեկույթներ, դասախոսություններ, ներկայացումներ՝ նպատակ ունենալով ի մի համախմբել, մի հարկի տակ, հայ նոր սերնդին, ապրել հայ ժողովրդի կյանքով, երազներով, մտահոգություններով, օտարներին ծանոթացնել հայ մշակույթի և հայ ժողովրդի պատմության հետ և ամրապնդել կապը Մայր Հայրենիքի և Սփյուռքի երիտասարդության հետ։

Վեհափառ Հայրապետի ներկայությունը, հանուն միության, ողջունում է Հայաստան Վարդանյանը։ Երիտասարդները երգում են, արտասանում, խոսում իրենց ծրագրերի, երազների, կյանքի և գործունեության մասին և լսում է Հայոց Հայրապետը մերթ խանդավառությամբ, մերթ՝ տրտմությամբ Իր պանդուխտ ու տարագիր երիտասարդ զավակների անորոշ բախտի վիճակով մտահոգ, և ապա խոսում է ավելի քան մեկ ժամ, Իր ոգևորիչ մտքերն ու պատգամները տալով ներկա բոլոր երիտասարդների միջոցով Սփյուռքի բովանդակ հայ երիտասարդության, Իր հայրենաշունչ ոգով լցնելով հայրենակարոտ երիտասարդ հոգիները. «Շատ ավելի դյուրին է անգլիացի, ֆրանսացի կամ ռուս ըլլալ, բայց հերոսական է հայ ապրիլ։ Կմաղթեմ, որ երիտասարդությունը այս ափերուն վրա հայրենասիրական ճշմարիտ ուղղությամբ զարգանա և գործե»,— եզրակացնում է Վեհափառ Հայրապետը երիտասարդության ուղղած Իր պատգամը։

Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Լոնդոնից

Փետրվարի 14-ին, կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցում, սուրբ պատարագ է մատուցում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Պսակ արքեպիսկոպոսը։

Սուրբ պատարագին ներկա է նաև Վեհափառ Հայրապետը, որը «Հայր մեր»-ի ժամանակ խոսում է հրաժեշտի քարոզը, օրհնելով բոլոր ներկաներին։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն եկեղեցու բարերարներ հանգուցյալ Սարգիս և Գալուստ Կյուլպենկյանների բարի հիշատակին։

Ժամը 1-ին, տեր և տիկին Պետրոս Ալեքսյանները, ի պատիվ Հայոց Հայրապետի, «Կենզինգտոն պալաս» հյուրանոցում, կազմակերպում են հրաժեշտի ընդունելություն, շուրջ 40 հրավիրյալների մասնակցությամբ, որն անցնում է սրտագին, խանդավառ մթնոլորտում։

Վեհափառ Հայրապետը առաջին բաժակը առաջարկում է խմել Անգլիայի Թագուհու կենաց, Տ. Պսակ արքեպիսկոպոսը՝ Վեհափառ Հայրապետի կենաց։

Յուրընկալ Պետրոս Ալեքսյանը երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսք է արտասանում Վեհափառ Հայրապետին ուղղյալ։

Տարբ. վարդապետը, Հ. Գալստյանը ողջունում են Վեհափառ Հայրապետի ներկայությունը սրտաբուխ հարգանքի արտահայտություններով և բարի ճանապարհ մաղթում Նորին Ս. Օծության։

Ա. Հատիտյանը բաժակ է բարձրացնում Պետրոս Ալեքսյանի կենաց, նրան բնութագրելով որպես ազնիվ, հավատացյալ և հայրենասեր հայ մարդու, որի սրտում միշտ վառ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտամունքը և հայրենիքի սերը։

Երվանդ Նիկողոսյանը կարդում է հետևյալ գեղեցիկ ուղերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Ձերդ Վեհափառության հովվապետական այս բարեբաստիկ այցին առիթով տիկնոջս և իմ որդիական սիրո, հարգանքի և ակնածանքի ամենախորունկ և ջերմ զգացումները կփափագիմ հայտնել Ձեզի և մեր սրտագին շնորհակալությունները ազնիվ տեր և տիկին Ալեքսյաններուն՝ այս բացառիկ պատվին և վայելքին համար։

Այսօր ուրախություն մըն է հաստատել, որ Սփյուռքի մեր տրտում իրականության մեջ

Ձեր օրհնաբեր ներկայությունը մեր ժողովուրդին միասնականությունը խորհրդանշող, մեզի համագործակցության ոգի և մեր հոգեկան արժեքներուն հանդեպ խանդավառություն, վստահություն ներշնչող հզորագույն աղդակն է, որ նոր եռանդ, կորով կպարգևէ պարտված հոգիներուն և հույս ու հավատք՝ հուսալքվածներուն։ Ձեր ներկայության, մեր սրտերը կթոթափեն իրենց վրայեն օտարության աղտն ու փոշին և ավելի զորավոր զարկերով հայրենի կրաբախեն, որովհետև Ձեզմով կզգանք կենսահոդ, թարմ շունչը մեր դրախտագեղ հայրենիքին և կշնչենք խնկաբույր մթնոլորտը Ս. Էջմիածնին։

Վեհափա՛ռ Տեր, սրտի անհուն հրճվանքով և երախտիքով կհետևինք Ձեր բոլոր բարի և աստվածահաճո գործերուն մեր Եկեղեցիին պայծառության և մեր սրբազան մշակույթին բարգավաճման ի խնդիր։ Կհպվատամ խորապես, որ հայուն Աստվածը կրկին տվավ ապացույցը Իր սիրույն տասը տարիներ առաջ, բախտորոշ թվականի մը, Ձեզ առաջնորդելով Այրարատյան նվիրական Աթոռին։

Վեհափա՛ռ Հայրապետ, ամեն առիթով և անընդհատորեն մեզի կշնորհեք Ձեր հայրական օրհնությունները և մաղթանքները և կհիշեք մեզ Ձեր աղոթքներուն մեջ։ Աշխարհացրիվ Ձեր բոլոր զավակներուն զգացումները արտահայտած պիտի ըլլամ, եթե երջանիկ այս առիթով փոխադարձաբար Ձեզի ի սրտե մաղթեմ, որ Դուք երկար և անխռով տարիներ գահակալեք և հովվեք Ձեր հոտը իմաստությամբը Լուսավորչին, հանճարովը Մեսրոպին, բարությամբը Մեծն Ներսեսին, արիությամբը Ղևոնդ Երեցին, շնորհովը Շնորհալիին և հավատքովը, սիրովը, նվիրումովը և օգնականությամբը մեր երանաշնորհ բոլոր սուրբ հայրապետներուն, ի փառս Ամենակալին և Հայաստանյայց Ս. և Առաքելական Եկեղեցվո և հօգուտ բազմաչարչար բարի և արի հայ ժողովուրդին»։

Ընդունելության գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերում տիկին Վ. Կյուզելյանը երգով՝ «Սև աչեր», Ա. Կյուզելյանը արտասանությամբ՝ Հ. Շիրազի «Հայրենիք»-ը։

Հայտնված ջերմ փափագի վրա, Տ. Պսակ արքեպիսկոպոսը մեներգում է «Հայաստան»-ը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը՝ մի հատված «Դավիթ բեկ» օպերայից։

Վերջում հրաժեշտի հուզիչ խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, որի դեմքի վրա ուրախության ճառագայթում կար, ի տես Իր հոգևոր զավակների սիրո և հարգանքի, որոնք լոկ անհատական զգացումներ և ապրումներ չէին, այլ ունեին համահայկական գույն, տարազ, խտացած յուրաքանչյուր հայ մարդու սրտի տակ։ Հայ ժողովուրդը ամեն տեղ նույնն է, իր պաշտամունքով ու նվիրումով դեպի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք։

Վեհափառ Հայրապետի հրաժեշտի կենդանի և հուզումնախառն խոսքը ունկնդրվում է երկյուղածորեն, հայորեն, խորաղդաց ապրումով։ Արցունք կար բոլորի աչքերին, երբ Հայոց Հայրապետը, օրհնելուց հետո հյուրընկալ տեր և տիկին Պետրոս Ալեքսյանի բարեպաշտությունն ու հայրենասիրությունը, հրաժեշտ է առնում բոլոր ներկաներից։

Ժամը 6—8, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է այցելությունը լոնդոնահայ գաղութի մի խումբ ներկայացուցիչների։

Ժամը 8-ին, Նորին Ս. Օծությունը օրհնաբեր Իր ներկայությամբ պատվում է նախկին ռումինահայ, տեր և տիկին Հայկ և Սալվի Հակոբյանների ընտանեկան հարկը, Իր շքախմբի անդամների ընկերակցությամբ, ուր Իր պատվին կազմակերպվել էր թեյասեղան։

Փետրվարի 15-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մեկնում է Լոնդոնից Մոսկվա։ Վեհափառ Հայրապետին ճանապարհում են Տ. Պսակ արքեպիսկոպոսը, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության և համայնքային խորհրդի հարգարժան անդամներ, Քենտրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչը, լոնդոնահայ կազմակերպությունների ներկայացուցիչներ և հավատացյալներ։

Հրաժեշտի վերջին րոպեներն են։

Վեհափառ Հայրապետը, ներկաների ծափահարությունների և բարեմաղթությունների ներքո, առաջնորդվում է ինքնաթիռ, օրհնելով բոլորին։

Ժամը 9.45-ին ինքնաթիռը բարձրանում է երկինք, ուղղություն վերցնելով դեպի Համբուրգ—Մոսկվա։

Բարի ճանապա՛րհ Հայոց հայրենանվեր Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին։